

## ԾՐԱԳԻՐ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2024-2027 ԹԹ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը և Իրանի Իսլամական Հանրապետությունը  
(այսուհետ՝ Կողմեր)

Ցանկանալով զարգացնել և ամրապնդել երկու երկրների միջև առկա  
բարեկամական և մշակութային կապերը,

Հիմք ընդունելով 1994 թվականի նոյեմբերի 27-ին (1373 թվականի ազար  
ամսվա 6-ին) ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և  
Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև մշակույթի,  
գիտության, կրթության, սպորտի, զբոսաշրջության և զանգվածային  
լրատվության միջոցների բնագավառներում համագործակցության մասին»  
համաձայնագրի դրույթները,

Համաձայնեցին հետևյալի մասին.

#### Հոդված 1

Կողմերը հայտարարում են երկու երկրներում մշակութային և  
գեղարվեստական շաբաթներ անցկացնելու իրենց պատրաստակամության  
մասին: Այս ծրագրերի մանրամասները կքննարկվեն դիվանագիտական  
ուղիներով:

#### Հոդված 2

Կողմերը կաջակցեն երկու երկրներում կազմակերպվող միջազգային  
փառատոներին, մրցույթներին և ցուցահանդեսներին իրենց ներկայացուցիչների  
մասնակցությամբ:

### **Հոդված 3**

Կողմերը կխրախուսեն մշակութային հաստատությունների և գեղարվեստական կենտրոնների միջև անմիջական կապերի հաստատումը, ինչպես նաև արվեստի քննադատների, մասնագետների և գեղարվեստական խմբերի փոխանակումները:

### **Հոդված 4**

Կողմերը կաջակցեն մշակույթի՝ ներառյալ արվեստի, գրականության, կինոյի և երաժշտության ոլորտներում փորձի, տեղեկության, գրքերի, հրապարակումների, լուսանկարների, ֆիլմերի և միկրոֆիլմերի փոխանակումներին:

### **Հոդված 5**

Կողմերը պատրաստակամություն են հայտնում կազմակերպել ժամանակակից արվեստի ցուցահանդեսներ, համատեղ ուսուցողական աշխատաժողովներ, մասնագիտացված հանդիպումներ արվեստի բնագավառներում՝ ներառելով ժամանակակից արվեստի մասնագիտական սեմինարներ:

### **Հոդված 6**

Կողմերը կնպաստեն կինոարվեստի ոլորտում համագործակցությանը, ներառյալ՝ ֆիլմերի համատեղ արտադրությանը, երկու երկրներում հայկական և իրանական համապատասխան կազմակերպությունների կողմից կազմակերպվող ֆիլմերի ցուցադրությանը, ինչպես նաև փոխադարձաբար կկազմակերպեն ֆիլմերի ցուցադրության շաբաթներ, կաջակցեն մյուս Կողմի կինոփառատոներին իրենց ներկայացուցիչների մասնակցությանը և պատվիրակությունների փոխանակմանը:

### **Հոդված 7**

Կողմերը կխրախուսեն համագործակցությունը Հայաստանի ազգային գրադարանի և Իրանի Իսլամական Հանրապետության ազգային գրադարանի և արխիվի, ինչպես նաև այլ ազգային գրադարանների ու արխիվների միջև՝ հատկապես տեղեկության, փորձի, գրքերի, պարբերականների, ձեռագրերի թվայնացված պատճենների, փորձագետների և մասնագետների փոխանակման, գրքերին և գրադարաններին առնչվող գիտաժողովներին և ցուցահանդեսներին մասնակցության և փոխայցելությունների ոլորտում՝ մեկնարկելով գիտահետազոտական նախագծեր, ուսումնասիրություններ, ինչպես նաև գործադիր և համատեղ հրապարակումներ:

### **Հոդված 8**

Կողմերը գրահրատարակչության ոլորտում միմյանց հետ կհամագործակցեն հետևյալ ուղղություններով՝

1. «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագրի և «Իրանական ստեղծագործությունների աջակցության և դեպի օտար լեզուներ թարգմանության» ծրագրի հնարավորությունների օգտագործում երկու երկրներում.

2. տեղեկության և փորձի փոխանակում գրքերին ու ընթերցանության խթանման առնչվող ծրագրերի ոլորտում՝ խրախուսելով երկու երկրների հաստատությունների միջազգային մշակութային միջոցառումներին մասնակցությունը.

3. երկու երկրների պատկերազարդման ոլորտի կարողությունների օգտագործում և գրողների, բանաստեղծների ու տվյալ ոլորտի այլ շահագրգիռ կողմերի խրախուսում՝ երկու երկրներում կազմակերպվող սիմպոզիումներին, կրթական աշխատաժողովներին, պոեզիայի շրջանակներին և գրական միջոցառումներին մասնակցելու համար.

4. Կողմերն իրենց օրակարգում կընդգրկեն այն միջոցները, որոնք

անհրաժեշտ են տպագիր, տեսողական և ձայնային ստեղծագործությունների հրատարակման և տեղեկության փոխանակման ու տեխնոլոգիաների ոլորտներում հրատարակչական միությունների և ընկերությունների համագործակցության համար.

5. միջազգային, ազգային և տարածաշրջանային մակարդակով կազմակերպվող մշակութային և գեղարվեստական ցուցահանդեսներում երկու երկրների ներկայության պլանավորում և Կողմերի կողմից ցուցահանդեսային պայմանների ապահովում.

6. մասնագիտական և լրատվության բնագավառում երկու երկրների հրատարակչական և գրավոր ստեղծագործությունների ոլորտի ժամանակակից մշակութային կարողությունների ներմուծում.

7. Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև մի շարք գրական հանդիպումների անցկացում՝ երկու երկրների մշակույթի ականավոր գործիչների ներկայությամբ և երկու երկրների մշակութային միջոցառումներին գրողների, նկարիչների, թարգմանիչների և այլ շահագրգիռ կողմերի փոխադարձ աջակցությամբ.

8. երկու երկրներում գրքերին և ընթերցանությանն առնչվող ծրագրերի և փառատոների ներդրում, ինչպես նաև հրատարակչական և գրավոր մշակույթի ոլորտներում փորձի փոխանակում:

### **Հոդված 9**

Կողմերը կաջակցեն աշխատանքների, ձեռագրերի և փաստաթղթերի պահպանության, պահպանման և վերականգնման ոլորտում փորձագետների, իսկ գրադարանային տեղեկության և արխիվների ոլորտում՝ փորձագետների և մասնագետների փոխանակմանը, սեմինարների և գիտաժողովների անցկացմանը, ինչպես նաև գրքերի և հրապարակումների փոխանակմանը, որոնք (ամբողջությամբ) ուղղված են փորձի փոխանակմանը:

### **Հոդված 10**

Պատմամշակութային հուշարձանների և թանգարանների պահպանման և վերականգնման նպատակով Կողմերը կաջակցեն պատվիրակությունների, ճարտարապետների, թանգարանագետների այցելություններին և դասախոսությունների կազմակերպմանը, ինչպես նաև համապատասխան պարբերականների փոխանակմանը:

### **Հոդված 11**

Կողմերը կհամագործակցեն ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում մշակութային արժեքների գրանցման հարցերում փորձի փոխանակման ուղղությամբ և ջանքեր կգործադրեն մշակութային ժառանգության յուրացման կամ կեղծման փորձերի դեմ համատեղ պայքարելու համար, ինչպես նաև կկազմակերպեն վերապատրաստման համապատասխան դասընթացներ:

### **Հոդված 12**

1. Կողմերը կհամագործակցեն միջազգային կազմակերպությունների շրջանակներում, հատկապես՝ ոչ նյութական և նյութական մշակութային ժառանգության ոլորտներում, ինչպես նաև անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն համապատասխան փորձագետների փոխանակման և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող գիտահետազոտական ինստիտուտների միջև համագործակցության զարգացման ուղղությամբ:

2. Կողմերը կմասնակցեն նաև ոչ նյութական և նյութական մշակութային ժառանգության պահպանությանը նվիրված գիտական սեմինարներին և կրթական ծրագրերին, որոնք կիրականացվեն յուրաքանչյուր Կողմի տարածքում:

### **Հոդված 13**

Կողմերի միջև մշակութային փոխանակումը կիրականացվի հետևյալ պայմաններին համապատասխան.

1. Գեղարվեստական խմբերի և պատվիրակությունների փոխանակման դեպքում՝

ա) ուղարկող Կողմը ապահովում է միջազգային ճանապարհորդության, երկու ուղղություններով բեռների և պատկանելիքների փոխադրումների հետ կապված ծախսերը.

բ) հյուրընկալող Կողմը ապահովում է կեցության, սննդի ծախսերը (կամ երկրում ընդունված չափաքանակներին համապատասխան՝ օրապահիկների ծախսերը), ինչպես նաև իր տարածքում իրականացվող տեղական փոխադրման ծախսերը, անհրաժեշտության դեպքում կտրամադրի մշակութային ծրագիր, թարգմանիչներ և բժշկական օգնություն:

2. Ցուցահանդեսների փոխանակման դեպքում՝

ա) ուղարկող Կողմը ապահովում է ցուցանմուշների՝ մինչև հյուրընկալող Կողմի մայրաքաղաք և հակառակ ուղղությամբ իրականացվող միջազգային փոխադրման ծախսերը, կվճարի ցուցանմուշի ապահովագրության ծախսերը և ցուցահանդեսի բացումից վեց ամիս առաջ կտրամադրի գովազդային նյութեր.

բ) ուղարկող Կողմը ապահովում է ցուցահանդեսն ուղեկցող անձանց և (կամ) պատվիրակության միջազգային ճանապարհորդության ծախսերը.

գ) հյուրընկալող Կողմը ապահովում է ցուցահանդեսի տեղադրումն ու ապամոնտաժումը, ցուցանմուշների տեղափոխումը երկրի ներսում, կապահովի ցուցանմուշների անվտանգությունը և անհրաժեշտության դեպքում կիրապարակի գովազդային նյութեր.

դ) հյուրընկալող Կողմը ապահովում է կեցության, սննդի ծախսերը (կամ երկրում ընդունված չափաքանակներին համապատասխան՝ օրապահիկների ծախսերը), ինչպես նաև իր տարածքում իրականացվող տեղական փոխադրման ծախսերը, անհրաժեշտության դեպքում կտրամադրի մշակութային ծրագիր, թարգմանիչներ և բժշկական օգնություն:

#### **Հոդված 14**

Միջոցառումից երեք ամիս առաջ Կողմերը կփոխանակեն տեղեկություն՝ միջոցառումների պայմանների, ծրագրի և վերջնաժամկետի վերաբերյալ, կտրամադրեն միջոցառման կազմակերպման համար համապատասխան նյութեր և անհրաժեշտության դեպքում կստորագրեն համապատասխան պայմանագրեր:

#### **Հոդված 15**

Սույն Ծրագրի խնդիրները և նպատակներն իրականացնելու նպատակով Կողմերը կարող են ստեղծել իրենց ներկայացուցիչներից բաղկացած աշխատանքային խմբեր: Սույն Ծրագրով նախատեսված միջոցառումների անցկացման հետ կապված ֆինանսական և կազմակերպչական մյուս հարցերը կկարգավորվեն Կողմերի միջև փոխըմբռնման միջոցով:

#### **Հոդված 16**

1. Սույն Ծրագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից, գործում է երեք (3) տարի ժամկետով և ինքնաբերաբար երկարաձգվում է ևս երեք (3) տարի տևողությամբ հաջորդող ժամանակահատվածներով՝ երկու կողմերի փոխադարձ որոշմամբ, եթե սույն Ծրագրի գործողության ավարտից առնվազն վեց (6) ամիս առաջ Կողմերից որևէ մեկը մյուս Կողմին գրավոր չի տեղեկացնում սույն Ծրագիրը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կողմերի ցանկությամբ և գրավոր համաձայնությամբ սույն Ծրագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք կկազմեն սույն Ծրագրի անբաժանելի մասը:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Ծրագիրը՝ դիվանագիտական խողովակներով գրավոր ծանուցում ուղարկելով մյուս կողմին: Սույն Ծրագրի դադարեցումն ուժի մեջ է մտնում մյուս Կողմից վերոնշյալ ծանուցումը ստանալու օրվանից վեց (6) ամիս հետո: Սույն Ծրագրի դադարեցումը չի ազդի Ծրագրի շրջանակներում որևէ ընթացիկ գործողությունների ավարտի

վրա, եթե Կողմերը որևէ այլ որոշում չկայացնեն:

Սույն Ծրագրի իրականացման կամ մեկնաբանման հետ կապված ցանկացած տարաձայնություն կլուծվի դիվանագիտական ուղիներով երկու կողմերի համապատասխան հաստատությունների միջև բանակցության միջոցով:

Սույն Ծրագրի դրույթները պետք է իրականացվեն ազգային օրենսդրությանը և Կողմերի ֆինանսական հնարավորություններին համապատասխան:

Կատարված է Երևան քաղաքում 2024 թվականի մայիսի 3-ին, որը համապատասխանում է 1403/02/14-ին՝ երկու բնօրինակով, յուրաքանչյուրը հայերեն, պարսկերեն և անգլերեն, բոլոր տեքստերը հավասարազոր են: Դրույթների մեկնաբանման կամ կիրարկման հարցում տարաձայնությունների դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ



ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

